№ 40 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐ 28

1895

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐ 28 № 40

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան. կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի:

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 րուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի:

Արտասահմանից փողի համար պէտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչեւ 2 ժամը. բացի կիրակի եւ տօն օրերից:

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով իւրաքանչիւր բառին մի անգամւայ համար 1 շահի: Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ:

Նամակները, նաեւ Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՐԱՒԷՐ

ՀԱՅ ՋՈՀԵՐԱ՛ՆԵՐ, ՈՐՔ ՆՆՋԵՑԱ՛Ն Ի ՏԷՐ

Կ. Պոլիս, Տրապիզոն, Երզրում եւ այլ քաղաքներում—սորա համար պարտ եմք, Հայոց եկեղեցւոյ օրինաց համաձայն, յիշատակութիւն անել՝ հոգեհանգստեան պաշտօն կատարելով:

Ուստի, վաղը կիւրակէ, հոկտեմբեր 29-ի առաւօտեան, զկնի պատարագի, ս. Գէորգ եկեղեցում պաշտօն պիտի կատարուի յիշեալ քաղաքներում եւ այլ տեղերում **ՋՈՀՈՒԱԾ** հայերի հոգիների համար:

Հրաւիրվում է Թէհրանի **ԲՈԼՈՐ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՆ** ներկայ գտնուել եւ մասնակցել հայ եղբայրների հոգիների համար կատարուած աղօթքին:

Առաջ. Տեղապահ Պարսկաստանի եւ փոխ. թեմին Թէհրանի՝

Սահակ ծ. վ. Այվատեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այժմ կամ երբէք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Սալմաստից. Նամակ Էնզելիից Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—Յայտարարութիւններ.—ՄԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ընթերցանութիւն՝ ինքնակրթութեան համար:

ԱՅԺՄ ԿԱՄ ԵՐԲԷՔ

Այս րոպէիս «քաղաքակիրթ» կոչուելու անմտութիւնն ունեցող Եւրոպական ազգերի առջեւ, նրանց քթի մօտ, Հայաստանի քաղաքներում եւ գիւղերում՝ հարիւրներով ու հազարներով կոտորւում են մեր եղբայրներն: Հոսում է արիւնը առւակի պէս, ծխում են վայրենիների ձեռքով քալուքանդ եղած հայ գիւղերի աւերակները, բնտանիքներ ամբողջ սրախողխող են լինում կրօնամոլ, մարդու անունը կրելու անարժան՝ մի բարբարոս ամբոխի ձեռքով: Մի քաղաքում միայն, ականատեսները տեսել են մորթուած 4 ժամւայ ընթացքում՝ 1200—1600 հայեր. չի մնացել 13-ից վեր ոչ մի հասակաւոր հայ...

Թալանում են, այրում, շեփորների նշաններով, պաշտօնական ձեւերով, կանխամտածուած ծրագրներով խմբեր են կազմում, զինուած ուժով վրայ են տալիս օրը ցերեկով երկրի ամենագլխաւոր նաւահանգիստ քաղաքի խաղաղ բնակիչների վրայ, մորթոտում են, կողոպտում նրանց ունեցածը, լլկում, ապա կտոր կտոր անում նրանց կանանց, նողկալի վայրենութեամբ յօշոտում, ոչնչացնում ամեն շունչ....

Այդ բոլորը կատարվում է Եւրոպայից ոչ շատ հեռու մի երկրում, ազգ կոչուելու լիովին անարժան, բարբարոս ինստինկտներով խուժանի ձեռքով, որին քրիստոնեայ ազգերը հանդուրժում են...

Եւ չը մնաց հայ՝ Հայաստանում, նրա իւրաքանչիւր քաղաք այժմ գերեզմանի է փոխվել. այնտեղ, փողոցների միջից, մեր եղբայրների եւ քոյրերի արիւնից առւակներ են կազմուել. դիակներով լցուել ամէն կողմ, աւերակներ են գոյացել իւրաքանչիւր հայի կալուածի մէջ.... Կէսը գաղթեց ոչնչացաւ, իսկ միւս կէսը ահա բառի բուն նշանակութեամբ մորթվում է մարդկութեան համար երբ անէծք ներկայացող՝ մի բարբարոս խուժանի ձեռքով:

Թւե՞լ արդեօք թէ ինչե՛ր կրեց թշուառ հայը իր հողի վրայ դարերից ի վեր: Անապահով, հարստահարուած ու լլկուած 36 միլիոն ժողովրդից, կոտորուելով կոտորուելով այսօր 4 միլիոն էլ հազիւ մնացած, քրիստոնեայ, քաղաքակրթութեան ընդունակ, խաղաղ լինելով հանդերձ, այսօր մորթվում են, կոտորվում մի ազգի ձեռքով, որ իր գոյութեան սկզբից մինչեւ այժմ Եւրոպայի աչքի առջեւ պարզել է բարբարոսութեան ու արիւնարբութեան ինստինկտներ, յամառ վայրենութեան ու գազանութեան յատկութիւններ միայն...

Ինչո՞վ է մեղաւոր հայը ուրեմն, եթէ նա պահանջում է թողնել իրեն իր աշխատանքը, չանպատուել իր կինը, չը խլել իր ստացուածքը, չը պղծել իր պատիւն ու սրբութիւնները...

Ուրեմն նա իրաւունք չունի այդքանն էլ. նրան վիճակուած է միշտ ստրո՛ւկ մնալ, այն էլ վերը մի բարբարոս խուժանի սրի տակ, ամէն մի րոպէ հարստահարուած ու բռնաբարուած...

Այս րոպէիս կատարվում է պատմական մի մոմէնտ. գոյութեան կռիւը իր ալրոյ կէտի մէջն է երկու ազգերի մէջ. բայց գոյութեան մի կռիւ, ուր ոյժերը լիովին անհաւասա՛ր են: Ցափշտակութեամբ: քրիստոնեայ աշխարհի անհոգութեան եւ հանդուրժելու շնորհիւ զէնքի տէր եղած, այդ ազգերից մէկը ստացել է ամէն բան աւերելու բարբարոսի յատկութիւն, իսկ միւս ազգը, խաղաղ կուլտուրայի ընդունակ, զուրկ կռւի համար միջոցներից, զուրկ պաշտպանութիւնից՝ հարիւրներով, հազարներով է սրամաշ լինում—ընկնում, Հայաստանի չքեղ սարն ու ձորը իր անմեղ արիւնով ողողում, ներկում....

Ոչ թէ Աւստրալիայի կամ Աֆրիկէի մի ետ ընկած անկիւնումն է որ կատարվում են այդ տեսակ բարբարոսութիւններ, այլ Եւրոպայի կողքին, նրա աչքի առջեւ: Այս րոպէիս էլ, մի քանի քայլ հեռւում «Die Wafen nieder» ի բաց զէնքեր» կոչող այն բոլոր ազգերը, որոնք քրիստոնեայ, քաղաքակիրթ լինելով են պարծենում—կատարեալ անհոգութեամբ, շատ շատ մի քանի անմիտ, գռեհիկ նախադասութիւններով ողբալով միայն մեր թշուառ եղբայրների յօշոտուած դիակների վրայ—հանդուրժում են որ մի ամբողջ ազգ սրախողխող լինի, կոտորուի ու ոչնչանայ....

ՄԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

(Ռուս պրոֆեսսօրների կազմած մի ծրագրի առթիւ)

Ահա այդ էր պատմութեան համար տուած ամփոփ ծրագիրը: Բայց սրանով խօսք չէ՝ բաւականանում Յանձնախումբը. ընթերցողն էլ չի բաւականանայ. նրան հարկաւոր է իմանալ թէ ինչպէս պէտք է պարապել, ինչպէս սովորել, ինչ գիրք վերցնել կամ որ կէտերի վրայ ուշադրութիւն դարձնել—եւ որը գլխաւորն է—ինչպէս կարողանալ եզրակացութիւններ հանել, պատմական օրէնքներ նշմարելու կարողութիւնը հանել: Ահա այդ աչքի առջեւ ունենալով է, որ Յանձնախումբը, գրքի երկրորդ մասում, երես 95-ից մինչեւ 124-ը, շատ մանրամասնութեամբ՝ լրացնում է այդ պակասը. Նախ տալիս է մի ցանկ՝ կարդալու անհրաժեշտ գրքերի, յետոյ կարդալու յանձնարարուող գրքերի, յետոյ մի որոշ գրքից՝ կարդալու գլուխներ եւ կարդալու պլանը. ապա պատմութեան իւրաքանչիւր ժամանակի գլխաւոր էպօխաները եւ այլն եւ այլն շատ մանրամասնութեամբ. Յետոյ ուրեմն տալիս է հարցեր, որոնց պիտի ընթերցողը աշխատի քննել, պատասխանները գտնել: Մի օրինակ: Ընթերցողը հռովմէական պատմութիւնը լաւ կարդալուց յետոյ, պիտի աշխատի ինքն իրեն՝ պատասխանել այսպիսի հարցերի. 1) Ինչպէս կազմուեցին Հռովմում պօլիտիկական կուսակցութիւնները. 2) Ինչպէս էին կառավարվում հռովմէական նահանգները եւ ինչ կախում ունէին նրանց կառավարիչները՝ Սենատից. 3) Ինչի մէջն էր կայանում ազատ բանւորների եւ ստրուկների դրութեան զանազանութիւնը. 4) Հռովմէական վաճառականական մարմինը ինչպէս էր տանում իր դրամական գործերը եւ այդ դասը ինչ դեր ունէր հռովմէական ընկերութեան մէջ եւ այլն եւ այլն:

Այսպիսի բազմաթիւ կրթիչ հարցեր հետեւում են միմեանց, որոնց պատասխանելով ընթերցողը՝ կատարելապէս կը գիտենայ պատմութիւնը. այնպէս, որպէս այդ ճիւղով զբաղւող մի համալսարանական:

Բայց դեռ այդ բաւական չէ. հարկաւոր է ուսումնասիրել պատմութեան լրացուցիչ, օժանդակող գիտութիւնները: Գիրքը ունի հոգեբանական եւ փիլիսոփայական բաժին, այլ եւ քաղաքատնտեսութեան (որ պատմական գիտութիւնների հիմքն է կազմում) բաժին: Քաղաքատնտեսութիւնը (Economie politique) մի գիտութիւն է, որ Եւրոպայում ոչ միայն ամեն փոքր ի շատէ զարգացած անձ, այլ եւ ամեն մի վաճառական ուսումնասիրում է: Մի գիտութիւն է այդ, առանց որի պատմութեան ընթացքը, պատմական երեւոյթները ըմբռնել անհնար է: Քաղաքատնտեսութիւնը «հարստութեան» գիտութիւնն է. թէ ինչ կերպով ձեռք է բերվում հարստութիւն (ոչ թէ փողաւորութիւն, այլ նիւթական պիտոյքներ), ինչպէս է գործածվում եւ ինչպէս պիտի բաժանւի նա: Քաղաքատնտեսութիւնը հասկացողութիւն է տալիս մի խօսքով՝ արդիւնագործութեան (production), սպառումի (consommation) եւ նրա բաշխման (repartition) մասին ոչ միայն մի մասնաւոր հասարակութեանը՝ այլ ամբողջ մարդկութեանը: Դժբաղդաբար, ոչ մի հայերէն դասագիրք չունենք այդ կարեւոր գիտութեան համար: «Ընտանեկան ընթերցանութեան ծրագիրը» մի առանձին բաժին է բաց անում այդ գիտութիւնը ուսումնասիրելու, 105 գլխաւոր հարցերով:

Եւ այսպէս ընթերցողը պարզ տեսնում է թէ որպիսի բարձր ու կրթիչ ձեռնարկութիւն է որ սկսել են ռուս պրոֆէսսօրները եւ որպիսի խնամքով կազմած ու շատ պիտանի պրօգրամ է, որ հրատարակել են, գին նշանակելով միայն 25 կոպէկ: Պարզ է որ այդ գիրքը շատ շատերի առաջնորդ է լինելու եւ շատ շատերի կրթելու:

Որպիսի՜ վատ կատակ են թւում այդ բոլոր ճառերն ու փքուն ուռուցիկ խօսքերը, որոնք խօսվում են այս և այն շքեղապէս զարդարուած խնջոյքների մէջ, այս և այն լաւ կերած և ապա մարսելու եկած ամբոխով կազմուած՝ միտինգների մէջ…

Այնտեղ մարսում են խօսելով, ճարտարախօսութեան փորձեր են անում, հռետորութիւն ծախում, իսկ այս կողմը—Հայաստանում—բարբարոս ժխորը յարձակվում է անզէն ազգաբնակութեան վրայ, արեան լճակներ կազմում, մի առ մի կոտորում և Բարդուղիմէոսեան գիշերներով ծաղրում այդ ճարտարախօսութիւնները…

Մարդ չը գիտէ, չէ կարող հետևանքի մասին ոչինչ ասել. տխուր, խիստ տխուր մտածութիւններ խեղդում են դարձնում մարդու, երբ լսում է այդ բոլորը, տեսնում է այդ ամէնը։

Ինչ պիտի լինի այդ կոտորածների, այն քնեցնող դանդաղ քայլերի և գռեհկացած ֆրազների արդիւնքը… Այդ գետացող արիւնը արդեօք վերջ պիտի տայ նրանց գոյութեան, թէ պիտի լուսաւորէ նահատակ ազգի ապագան։

Դրանից գերեզմա՞ն պիտի գոյանայ թէ կեանք պիտի ծնի…

Կեանքի և մահու կէտի վրայ է հայ ազգը Հայաստանում։ Էլ ետ կանգնել անհնար է։ Մնում է քայլել տեղ հասնելու համար և կամ մեռնել։ Որքա՜ն ոյժ կայ պիտի առաջ գնալ. կողմնակի, միայն անձնական շահերով ղեկավարւող խմբերի դատարկ ու քնեցնող խոստումներն՝ աւելի ջլատեցրին քան քաջալերեցին, յոգնեցրին քան կազդուրեցին։

Ոչ օգուտ են ունեցել և ոչ էլ այլ ևս ունին՝ խնդիրք կամ աղաչանք. ոչ մի արդիւնք չը տւին խոստումն ու հռետորական մեծախօսութիւնները։

Ոգի ի բուին, բոլոր ոյժը ժողոված առաջ գնալ—ահա միակ միջոցը որ մնացել է, որ էր և որ պիտի լինի և որին գործադրելու ծայրահեղ կէտն է, որ ներկայանում է։

Այժմ կամ երբէք․․․ Վ. Փ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ

—

6 Հոկտ. 95

Վերջապէս Սալմաստը ազատուեց իր պատուհասներից մէկից։ Մեր տեսուչը, մի քանի օր առաջ ճանապարհւեց դէպի իր ծննդավայրը. նա գնաց ըստ իս, «օրօր» երգելու, այդպէս է դրանց մուտքը ու անկենդան դէմքը, ինչ արած։

Այժմ ինքն ըստ ինքեան հարց է ծագում, Աւետիս անը որ հեռացաւ՝ հապա տեսչութիւնը։ Տեսչութիւնը դարձել է ժառանգական. Աւետիսեանը, իբրև ժառանգութիւն, տեսչութիւնը թողել է Ներսէս Գրիգորեանին և Սարգսեանն էլ հաստատել է նրան «տեսչական փոխանորդի» պաշտօնում, իր յատուկ գիտութեամբ և բարեհաճ կամքով միայն։ Այդպիսով մեր հոգևորականութիւնը, ինչքան էլ պայծառ լինի Ամերիկայում—ժողովրդական ազատ ձայնի այդ որրանում, ինչքան էլ շփւած լինի ընտրողական մեծ սկզբունքին և նրա բարերար արդիւնքներին, բայց և այնպէս դարձեալ ապացուցանում է որ իր բռնաբարած ուղեղը միանգամայն անմատչելի է նոր գաղափարներին ու լայն սկզբունքներին։

Տարիներից ի վեր Թաւրիզում քարոզվում էին ժողովրդական իրաւունքներ և նրանց գործադրութիւնը՝ ընտրողական սկզբունքի միջոցով։ Եւ սկսեց առաջին քայլերի իրագործումը. դրան ապացոյց առաջնորդների ու թեմական տեսչի ընտրութիւն։ Այդ բոլորից յետոյ դարձեալ սկսվում են նորագոյն կեանքի պահանջները չըմբռնող անշնորհ հոգևորականութեան պատմական ոտնձգութիւնները։

Չը կայ երևոյթներին գիտակցօրէն վերաբերւող հասարակութիւն, որ պաշտպան հանդիսանայ իր ոտնակոխ եղող արդար իրաւունքներին. կայ միայն ամբոխ, խաւարի մէջ սնւած ամբոխ, սորկութեան մէջ մեծացած ամբոխ, որ միշտ խոնարհ ծառայ է ոյժի առաջ.

***

ՆԱՄԱԿ ԵՆԶԵԼԻՑ

—

19 Հոկտ. 95

Այստեղի դպրոցը բացւեց. ուսուցիչ էլ վարձւած լինելով, ուսումները սկսեցին։ Ենզելեցիք Ռաշտեցոց պէս վախկոտ և թուլասիրտ չեն և ոչ էլ նրանց մէջ տիրում է աղալական ազգեցութիւն շնորհիւ մի քանի ուսումնասէր անձինքների, այստեղի դպրոցը Ռաշտի դպրոցից անգամ կանոնաւոր եղաւ։ Ունի 18 աշակերտ։

Շուտով էնզելեցիք մի գրադարան ևս կունենան։

Մօտ 300 բանւորներ են ածել, Ենզելի-Թեհրանեան շինւելիք երկաթուղու վրայ աշխատելու համար։ Երկաթուղու գիծը քաշւելու է Փիրբազարի ճանապարհից անտառի միջով մինչև Ռաշտ և այնտեղից էլ Թեհրան։ Ընկերութիւնը որոշել է գիծը տանել մինչև Դավրէժ, Մէշէդ և Խորասան։ Լսում ենք, որ երկաթուղու վագոններ ևայլն պատրաստվում են արդէն Օդեսսայում։

Մուրադ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թեհրան 26 Հոկտ. 25

«Շաւիղի» 37 և 39 համարների մէջ Սպահանի՝ Ամեն. վանքի մասին գրածները կարդալուց և այնտեղ յիշատակւած շատ զուտ ճշմարտութիւններ հաստատելուց յետոյ, թոյլ տւէք ինձ մի քանի խօսք ասել այդ առիթով։

Նոր-Ջուղայի վանքն ու վարժարանը, մեծ բաղդ ունեցաւ, որ Եսայի եպիսկոպոսը եկաւ Ջուղա, ապա թէ ոչ՝ վանքի և վարժարանի բանը վատ կը լինէր, որովհետև պարտքի տակ էին ընկել։ Վանքի այդքան եկամուտը, որ ցոյց է տւած ձեր թերթի № 39-ում, արգելք չէր եղել որ վանքը ազատ մնար պարտքից։ Դրա պատճառը այն էր, որ ամէն հասնող կողոպտում էր նրան. ոչ հաշիւ կար և ոչ էլ հետաքրքրւող։ Շատ հեռու չը գնանք. Գրիգորիս եպիսկոպոսը 10—12 տարի Ջուղա մնաց և մի հաշիւ չը տւեց ժողովրդին. միշտ շուրջը ունենալով աղաներ, վանքի կալւածների և այլ եկամուտները ուտում էին. վայելում էին չաղ հաւերը, խմում լաւ գինին. վանքը դարձրել էին հիւրանոց։ Գրիգորիս եպիսկոպոսը մինչև իսկ վանքի զարդերը կողոպտեց։ Լաւ է որ շուտ հեռացաւ, ապա թէ ոչ վանքը այժմ ո՞վ գիտէ որ վաշխառուի ձեռքը ընկած լինէր։ Եսայի եպիսկոպոսն էր, որ վանքի ահագին պարտքը վճարելուց յետոյ, կարգի դրեց Ջօ ղայի դպրոցը և առաջին անգամը լինելով, ժողովրդին հաշիւ տւեց Ջուղայի հաստատութիւնների համար։ Թէ քիչ թէ շատ եկամուտով, էլի լաւ է որ Ամեն. վանքը այնքան երկար տարիներ կ'ղոպտւած լինելոց յետոյ ջուղայեցի աղաներից, Եսայի եպիսկոպոսի շնորհիւ 900 թուման դրամագլխի տէր դարձաւ։ Այս էլ ասեմ որ եթէ Եսայի եպիսկոպոսի հետ շատ ջուղայ ցի աղաներ թշնամացան, պատճառը այն էր, որ շատերի գողութիւնը երևան հանեց, շատերից՝ վանքին պարտք եղած փողերը պահանջեց և էլ չը թողեց որ նրանք վայելեն վանքի եկամուտները։

Մեր ջուղայեցի եղբայրները ինչու են լռել։ Քանի են թէ աղաներից են վախենում, որ ճշմարտութիւնը չեն յայտնում։ Յոյս ունենք, որ շնորհիւ «Շաւիղի» շուտով շատ բան կը պարզւի Ամեն. վանքի գործերի վերաբերութեամբ և շատ վանքը կողոպտող աւազակների դիմակները կը պատռւին։ Սպասում ենք ջուղայեցիների ասելիքներին։

Թեհրանաբնակ Ջուղայեցի.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ինչպէս որ փոխ. հօր հրաւէրը յայտնում է, վաղը Ս. Գէորգ եկեղեցում կատարւելու է Հայաստանում մեր նահատակների հոգւոյ հանգստեան պաշտօն։

Այժմ, երբ հաշիւ տւինք գրքի բովանդակութեան մասին, տեսնենք թէ չէր կարելի արդեօք նրա հիման վրայ, նրա իսկ մեթոդով և սիստեմով՝ կազմել ընտանեկան ինքնակրթութեան մի ծրագիր՝ հայ ընթերցողների համար։

Հասկանալի է որ դա մի տաժանելի աշխատութիւն կը լինէր։ Դժւար է ենթադրել որ ռուսաց պրօֆէսօրների պէս հայ ուսուցիչները, համալսարականները գոնէ կարող լինէին նոյնպէս կազմել մի այդպիսի ընկերութիւն, նշանակել ծրագիրը մշակող մի մասնախումբ և տալ հայ ինքնակրթւող երիտասարդին՝ մեր առջև կեցած ծրագրի պէս մի ուղեցոյց. կամ ղեկավարել—ռուս մասնախմբի պէս—ինքնակրթւողներին՝ իրենց պարբերական խորհուրդներով և օգնութեամբ։ Դժւար է ենթադրել, որովհետև հայը մինչև այդտեղ հասնելու համար դեռ ուրիշ շատ բաներ ունի անելու, շատ ձեռնարկութիւններ սկսելու։

Մնում է ուրեմն, որ մի կամ մի քանի հոգի, հմուտ՝ ծրագրւող առարկաներին, նատէին և գոնէ կազմէին մի թեթև ծրագիր ընթերցանութեան համար, աչքի առջև ունենալով թէ օտարլեզւով և թէ հայերէն ընթերցանութեան գրքերը։

Հայերէն լեզւով, ժողովրդական ընթերցանութեան համար կազմած գիտական գրքեր եթէ չասեմ բոլորովին չը կան, խիստ սակաւ են մեր մէջ։ Նոյն իսկ կարևոր դասագրքեր չը կան։ Ինչ կասէիք օրինակ, եթէ ասեմ որ բնագիտութեան համար (ֆիզիկա) միայն երկու, այն էլ խիստ համառօտ ձեռնարկներ ունինք։ Առաջինը որ կազմւած է 1877 թւին, Պետերբուրգի հայ ուսանողների տպագրութիւններից է և, պիտի ասել, ժողովրդական ընթերցանութեան համար յարմար է. երկրորդը կազմւած է Կ. Պոլիս «Բնագիտութիւն Աւլանեանի» անունով ծանօթ և չէ կարող հասկանալի լինել ոչ Կովկասի և ոչ էլ Պարսկաստանի հայերին։ Մնում է մի երրորդն էլ—Վեննետիկի հրատարակութիւն, որ ներկայանում է գործադրութեան համար որպէս լիովին անպէտք։

Տեսէք ուրեմն. ամենակարևոր առարկայի, գիտութեան ամենահիմնական ճիւղերից մէկի համար՝ չունինք ընթերցանութեան գրքեր, դպրոցների համար իսկ ձեռնարկներ։

Նոյն կերպով մեզ պակասում են գիտութեան բոլոր ճիւղերի համար։

Թւեմ օրինակի համար եղածներից մի քանիսը և ընթերցողը կարող է գաղափար կազմել թէ որքան խեղճ է մեր գրականութիւնը այդ կողմից ևս, որպէս բոլոր միւս կողմերից։

Քիմիայի համար ունենք Րօսկօյի «Տարրական Քիմիա», որը ամենայարմարն է համեմատաբար. կան երկու հատ Վենետիկեան՝ լիովին անպէտք։

Կենդանաբանութեան համար—չունենք ո՛չ մէկը յարմար, եղածները անպէտք են լիովին։

Բնախօսութեան (physiologie) համար ունենք երկու գրքեր. առաջինը Կ. Պոլսում տպած, բառացի և սակայն ամենախայտառակ թարգմանութիւն՝ Պօլբէրի «Anatomie et physiologie» գրքոյկից, կազմած Ն. Տաղաւարեանի։ Անհաս անալի լեզու և անպէտք հետևապէս։ Ունինք միայն մի հատ՝ Վ. Լունկեվիչի «Հանրամատչելի բնախօսութիւն», հրատարակութեամբ Թիֆ. Հայ. գրքերի հրա. ընկերութեան։ Դա մի գիրք է, որին խորհուրդ կը տայի կարդալ՝ ամենքին. նա կազմւած է շատ յարմար կերպով, պատկերազարդ է, ունի շատ մաքուր լեզու և մեր ժողովրդական գիտական գրականութեան մէջ՝ աստղերից մէկը կարելի է համարել։ Մնացած եղածները լիովին անպէտք են։

Բուսաբանութեան համար թէև ունենք մի քանի հատ, բայց բոլորն էլ անպէտք. վերջերս հրատարակւեց Ա. Քիշմիշեանի աշխատութիւնը, բայց նա էլ միւսների պէս անպէտք է գործածութեան համար։ Կայ և Վենետիկեան—նոյնպէս անպէտք։ Երկրաչափութեան համար ունինք մի քանի հատ՝ բայց հնացած և անպէտք։ Միայն հասարակ թւաբանութեան և ալգեբրայի համար ունենք Կովկասում հրատարակած բաւական թւով դասագրքեր։ Անցնենք այժմ պատմական գիտութիւններին։

Ի՞նչ գրքեր ունենք նոյն իսկ չոր պատմու-

հատակուած եղբայրների համար հոգեհանգիստ։ Յոյս ունինք որ ոչ միայն լուսաւորչական, այլ և ամէն դաւանութեան հայեր չեն զլանալ ներկայ գտնուելու այդ սգալի հոգեհանգստին։

—

Երէկ չէ առաջի օր, Դավրէժից ստացանք հետևեալ հեռագիրը։ «Խմբագրութիւն «Շաւիղի» Թէհրան. «Վիճակախաղը տեղի կունենայ ուրբաթ 27 հոկտ. հոգաբարձութիւն»։ Այս հեռագրալուրը յայտնում է ուրեմն որ երէկ վերջապէս, տեղի է ունեցել Դավրէժի դպրոցների վիճակախաղը, որ այնքան սպասվում էր։ Անշուշտ եկող շաբաթ էլ կը յայտարարեն նրա արդիւնքը։

—

«Մշակի»Էրզրումի թղթակիցը գրում է որ սեպտ. 23-ին, երեկոյեան ժամը 6-ին, դանակի հարուածով սպանուել են Էրզրումում շատ յայտնի մատնիչ Յարութիւն Էֆէնդի Տ. Սարգսեանը և նրա ընկերակից Սիմոն Պօղոսեանը։

—

Սոսկալի է եղել Տրապիզոնի հայերի և նրա շրջակայ հայաբնակ գիւղացիների կորուստը կոտորածի ժամանակ սեպտ. 26-ին։ Ականատեսները պատմել են, որ մինչև 1600 անձի անխնայ կոտորել են. 13-ից տարեկանից վեր համարեա էլ հայ չէ մնացել Տրապիզոնում կենդանի. սպանուածների թուումն են Տրապիզոնի բոլոր յայտնի հայ ընտանիքներ, նաև 7 յոյներ և մի քանի եւրոպացիներ։ Կոտորածը նախապատրաստուած է եղել և սկսելու նշան է տրուած զինուորական շեփորով առաւօտեան ժամը 11-ին, վերջացնելու նշան՝ 3-ին. ամեն ինչ ջարդել են, կողոպտել են խանութներ, հիւպատոսարաններ։ «Կոտորածը, ասումեն ականատեսները, այն աստիճան սարսափելի էր որ պատմելիս՝ պատմողները յուզմունքից ուշաթափ էին լինում։ Կովկասի լրագիրները մանրամասն տպում են նկարագրութիւններ։ Յոյների պատմելով (ասում է «Մշակի» Բաթումի թղթակիցը)մինչև 1200 քրիստոնեայ է կոտորուել որոնցից 90% հայեր են եղել։ Աւերուած են 16 հայ գիւղեր... Պաշտօնական հեռագիրները հաստատում են այդ լուրերը։

—

Սեպտ. 26-ի այդ նոզկալի կատորածից յետոյ արժէ կարդալ սաճկական սոյն պաշտօնական զեկուցումը, տպուած Կ.Պոլսի թերթերի մէջ։ «Նահանգներուն վիճակը. Սեպտեմբեր 26 թուով, գաւառներէն Բ. Դուռը հասած հեռագիրները կը ծանուցանեն թէ Հալէպի, Էնկիւրիի, Խարբերդի, Էրզրումի, Ատանայի, Պէրուտի, Սըվազի, Տիարպէքիրի, Տրապիզոնի եւ Պիթլիսի նահանգներուն մէջ ալ, շնորհիւ Վեհ. սուլթանին, անդորրութիւնը եւ ապահովութիւնը կատարեալ է»։

—

«Times» լրագրին հեռագրում են որ Տիկին Գլադստոնը Զեստերում կազմել է մի բարեգործական վիճակախաղ՝ յօգուտ Սասունի զոհերի։ Լորդ Սալսբիւրին Մանչեստրից 25,000 ֆրանկ ուղարկեց յօգուտ հայկական նպաստող ֆոնդի։

—

Ռուսաց գործակալութիւնը հեռագրում է Բաթումից հոկտ 3 թուով հետեւեալը։ «Մի հայ երիտասարդ ներս վազեց Թրքաքան մզկիթը հայհոյանքներով։ Թիւրքերը բռնեցին նրան և յանձնեցին ոստիկանութեան։ Տրապիզոնի հետ հաղորդակցութիւնը կտրուած է։ Ինչպէս լսվում է, Տրապիզոնում, անկարգութիւնների ժամանակ, սպանուած է 1000 հոգի։ Տրապիզոնի շրջակայ գիւղերում կոտորածներ են տեղի ունենում»։

—

Կովկասի լրագիրները հաղորդում են որ Տրապիզոնում կատարուած վերջին անցքերի պատճառով, խիստ հսկողութիւն է նշանակուած Բաթումի թիւրքերի վրայ։

—

Ռէյտերի գործակալութիւնը իմացնում է որ Հայաստանում ընդհանուր ապստամբութիւն է առաջ եկել։ Թիւրքական կառավարութիւնը զէնքի է կոչել 40000 պահեստի զօրք, իսկ հայերը պատրաստվում են Ռուսաց կայսեր դիմելու և պաշտպանութիւն խնդրելու։

—

Կ. Պոլսում տ'րում է դրամական ճգնաժամ, որովհետև 9 օր ամեն գործ կանգ էր առել և այժմ փոխանակները չեն վճարվում։ 7 օրւայ մէջ, ասում է «Մշակի» Կ. Պոլսի թղթակիցը, «վաճառականական դատարանին պրոտեստ է եղած 400,000 ոսկու (3,600,000 ռուբլի) փոխանակագիր. միայն Կրէդի-լիոնէն ձեռքումը ունի 80,000 ոսկու չը վճարուած փոխանակագիր։ Ընդհանուր շուարումն է տիրում և ծանր հետևանքներ սպառնում։

—

Ուրախութեամբ լսում ենք որ Դարվազա Ղազվինի Հայկազեան օրիորդաց դպրոցի աշակերտները հաւաքվում են. այժմ հասել է մինչև 22-ի։ Յոյս ունենք որ մինչև յունվար աւելի կը շատանան։

—

Մեզ հաղորդում են որ Վանաք գիւղի դպրոցը բացուել է. վարձուել է իբր ուսուցիչ պ.Մատթէոս Դանիէլեան. աւարտել է տեղական բողոք. դպրոցը։ Նրա մասին առ հասարակ լաւ են խօսում։

—

Շուշեցի Իսահակ Թադէոսեանի մեզ մօտ նուէր թողած երրորդ օրինակ «Շաւիղ» յատկացրինք Միանդաբի նորաբաց դպրոցին և ուղարկում ենք Մարաղա Տէր Տաճատ քահանայ Սրապիոնեանի հասցէով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսի թերթերը, սեպտ. 17-ի և հետևեալ օրերի սարսափելի հետևանքներ ունեցող հայկական խռովութիւնների մասին ահա թէ ինչպիսի «պաշտօնական» զեկուցումներ են տպագրում։

—«Կը ծանուցուի թէ տեսնելով որ Հայոց բիռնակիրի և ջրհանկիրի նման անհատներէ կարգ մը անձինք հոս ու հոն հաւաքուած են, ոստիկաններու և ոստիկան-զինուորներու միջամտութեամբն և առ Պատրիարքարան ուղղուած զեկոյցներու և յորդորներու վրայ՝ այդ հաւաքումները ցրուեցան։ Շնորհիւ վ. սուլթանին, կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տիրէ։

—Պաշտօնական զեկուցում (երեքշաբթի 19 սեպտ)։ «Երէկ Հայերէն կարգ մը մարդոց ըրած գումարումներուն ինչ կերպով ցրուելու այս օրուան լրագիրներուն մէջ հրատարակուած էր. այս գումարումներու դէմ զէնքով դիմադրողները բնականաբար ձերբակալուելով բանտարկուած են և դատերնին տեսնելով իրենց նկատմամբ օրէնքին տրամադրութեանց գործադրութիւնը և հրատարակութիւնը բընական ըլլալով, Ն. Կ. վեհ. ամէն իսլամ և ոչ իսլամ հպատակներուն ամեն դասակարգերը և ամեն անհատները պարտին շարժիլ հըպատակութեան օրինաւոր պարտականութեանց շրջանակին մէջ, և ով որ օրէնքի հակառակ շարժելու ըլլայ ծանրագոյն պատասխանատու պիտի նկատուի. կը հրամայուի և կը ծանուցուի թէ այդպիսիներուն մասին օրինական տրամադրութիւնները պիտի գործադրուին։»

—Պաշտօնական զեկուցում. «Կը լսուի թէ ժողովրդին դասակարգերուն մէջ մինչև մէկ աստիճան մտահոգութիւն կը տիրէ անցեալ շաբթուն պատահած անհաճոյ դէպքերուն պատճառաւ։ Սակայն, շնորհիւ վ. սուլթանին, կառավարութիւնը կարգապահական ամեն միջոցներ ձեռք առած է անդորրութիւնը և կանոնաւորութիւնը ապահովելու համար։ Ամեն կողմ զիշեր ցերեկ զինուորներու բաղմաթիւ շրջուն պահակախմբեր շրջագայել կը տուին։ Եւ թէև կարճամիտք ոմանք հոս ու հոն ստութիւններ հրատարակելու ալ նկրտին, բայց, ինչպէս նախապէս ալ ծանուցուեցաւ, անմիջապէս ըստ օրինի խստիւ պիտի պատժուին անոնք որ համարձակին խաղաղութիւնն ու ապահովութիւնը խանգարող ընթացքներու մէջ գտնուիլ։ Հետևաբար կը ծանուցուի թէ մտահոգութեան տեղի չկայ (!!) և ամեն ոք անդորրութեամբ իր գործերով զբաղի։»

—Պաշտօնական զեկուցումներ. «Անցեալ երկուշաբթի օր Հայոցմէ կարգ մը անձանց ձեռքով տեղի ունեցած դէպքին վրայ, թէև կառավարութիւն ձեռք առաւ ու գործադրեց

թեան համար, նոյն իսկ իրը դասագիրք։ Ընդամենը գուցէ երկու հատ միայն։ Միւսները, օրինակ Սիմէոնեանցի, Ղուկասեանցի, Վենետիկեան և այլն պատմութիւնները անպէտք, խայտառակ կերպով կազմած և ուշադրութեան իսկ անարժան գրքեր են։ Ամենալաւերը են 1) Ա. Երասխանեանցի «Արևելեան ազգերի հին պատմութիւնը» և 2) Մ. Մամուրեանի «Ընդհանուր աղգաց պատմութեան» մի քանի հատորները։ Ահա բոլորը։ Եւ ուսուցիչը, եթէ կամենում է բան սովորցնել ուսումնարանում և ոչ թէ գրքեր անգիր անել տալ թուղթակի պէս. պարտաւորուած է դիմել Վէբերի, Մասպերօի, Դիրիւյի, Մոմզէնի և այլ եւրոպական լեզուով միմիայն գոյութիւն ունեցող բազմաթիւ սքանչելի գործերին։

Պատմութեան դասագրքեր իսկ չը կան աշակերտների համար, ինչ մնաց ընթերցանութեան։ Չունենք նոյնպէս գրքեր Քաղաքակրթութեան, Գրականութեան, Կրօնների պատմութեանց համար. և ոչ իսկ մի բրոշիւր Քաղաքատնտեսութեան պէս ամենակարևոր մի գիտութեան համար, որի հետ շատ և շատ հայեր լիովին անծանօթ են։ Չունենք ոչ մի դասագիրք կամ ժողովրդական ընթերցանութեան համար կազմուած՝ Պօլիտիկական, Ընկերական սիստեմների, Փիլիսոփայութեան պատմութեան, Պատմութեան փիլիսոփայութեան, Երկրաբանութեան, Լեզուների ծագման և այլն այն մի շարք գիտութիւնների համար, որոնք պատմութեան օժանդակիչ, նրա հետ առնչականապէս կապ ունեցող ճանաչողութիւններ են, առանց որոնց պատմութիւնը չէ կարելի ուսումնասիրել կամ իմաստասիրել...

Դրէթէ ոչինչ, ոչինչ չունենք։ Ստիպուած ենք օտար լեզուների—ռուսերէնի, ֆրանսերէնի կամ գերմաներէնի և այլն դիմել, այդ լեզուներով է որ կան բազմաթիւ ժողովրդական էժանագին, շնչին գներով գրքեր՝ ամեն տեսակ ճանաչողութիւնների համար։

Ուրեմն ինչ անի այն անձը կամ այն խումբը, ոչ կը մտադրէ ռուս պրոֆեսսորների կազմած մի ծրագրի գոնէ մինիատուրը կազմել հայ ընթերցողների համար, որոնք ոչ մի եւրոպական լեզուի հետ ծանօթ չը լինեն։

Այդ է ամենամեծ դժուարութիւնը։ Ստիպուած պէտք է ցոյց տրուի օտար լեզուներով ընթերցանութեան գրքեր և կամ աշխատուի բաւականացնել հայերէն լեզով եղածներով։

Դրա համար էլ պէտք է որ մէկը կամ մի խումբ լաւ ծանօթ լինի հայ գրականութեան մէջ եղած բոլոր գրքերի հետ և այնպէս ձեռնարկի ծրագրի կազմելուն։

Այսպէս կամ այնպէս, շատ և շատ ցանկալի կը լինէր որ մէկը կամ մի խումբ՝ ձեռնարկէր այդ գործին։ Այդ առաջին փորձը գոնէ հետևեալ օգուտները կունենար. 1) Որ մեր գրադարանները կաշխատէին մի քիչ պէտքական գրքեր ունենալ և դուրս չպրտել այն բոլոր սուրբ կամ գրաբառ անպէտք գրքերը, որոնք փոշեպատ՝ ի զուր տեղ են բռնում դարաններում. 2) Այն անձինք որոնք չը գիտեն ինչ կարդալ, որ գրքից սկսել կամ որը ընտրել—կը ղեկավարուեն ծրագրով և 3) Այն անձինք որոնք չը գիտեն ինչ գրքեր գրնել, կը ձեռք բերեն ծրագրի ցոյց տուած գրքերից և կօգուտին նրանցով։

Եւ որը գլխաւորն է, այդ ծրագիրը կը լինի մի առաջնորդ՝ սիստեմատիկական ընթերցանութեան համար և կը ղեկավարի զարգանալ, սովորել ուզողներին...

Տեսնենք ուրեմն թէ ով կամ որոնք կը տան առաջին նշանը մի այդպիսի ձեռնարկութեան համար։

Ցամենայն դէպս, առ այժմ ես, «Շաւիղի» խմբագրութեան միջոցաւ, պատրաստ եմ բաշխել իմ խորհուրդները բոլոր նրանց, որոնք պէտք կունենան, որոնք կը դիմեն և որոնք ցանկութիւն կը յայտնեն ինքնակրթութեան համար՝ պարապել լուրջ գրքերի ընթերցանութեամբ։

Ամենակարևորն է ի նկատի ունենալ որ լուրջ գրքեր կարդալ գիտենալը՝ ինքնակրթութեան առաջին պայմանն է....

Բրիչ

(Կ.Փ.)

կարգապահութեան համար հարկ եղած միջոցները և հանրութեան անվտանգութիւնն ու ապահովութիւնը ձեռք բերաւ, բայց ասոնցմէ կարդ մը անձինք տակաւին իրենքզիրենք զղուշաւոր վիճակի մէջ ցոյց կուտան։ Սակայն յուսալի չէ որ յետ այսօրիկ ժողովուրդէն ո և է անհատ իր հայրենակցին դէմ՝ հանրութեան պաշտպանիքին պատճառ եղող ընթացքի մէջ գանուի։ Եթէ գանուին այնպիսի անձեր, որոնք ապահովութեան ու խաղաղութեան արժէքը չգիտնալով, իրարու վրայ յարձակին և զիրար կեղեքեն, ազանք, ըստ օրինի, խիստ պատիժներու պիտի ենթարկուին։ Ուստի կը ծանուցուի որ ամենքն ալ իրենց գործովը զբաղին և զգուշանան օրէնքի հակառակող ընթացքներէ և իրարու վրայ յարձակուելէ զերար կեղեքելէ։

– Լոնդոնից, սեպտ. 28-ից հեռագրում են «Նով. Վր.-ին». «Standard»-ը յայտնում է, որ մարքիզ Սալիսբիւրին կրճատել է իր արձակուրդի ժամանակը և վերադառնում է Անգլիա, որովհետև անհրաժեշտ է համարում անձամբ հաղորդակցութեան մէջ մտնել օտար պետութիւնների դեսպանների հետ՝ միջազգային գլխաւոր գործերի վերաբերմամբ։ Քաղաքական շրջաններում իրերի ներկայ դրութիւնը խիստ ծանր է համարվում։

—Աթէնքից հասած տեղեկութիւններից երևում է, որ Թիւրքիայում կատարուած անցքերի պատճառով՝ մտքերը խիստ գրգռուած են Յունաստանում. լրագիրները սկսել են պատերազմական ոճով խօսել։ Մեծ տպաւորութիւն է գործել այն լուրը, որ Կրետէ կղզում մի բազմամարդ ժողով է կայացել, ուր որոշուել է Կրետէ կղզին միացնել Յունաստանի հետ։ Լրագիրները վճռապէս պահանջում են կառավարութիւնից, որ նա օգուտ քաղէ ներկայ դրութիւնից և եռանդուն կերպով պահանջէ Յունաստանի պատմական իրաւունքները, որ ունի նա Կրետէի և Մակեդոնիայի վրայ»։

—Հաւասի Գործակալութիւնը Դամասկոսից հեռագրում է. «Դամասկոսի ֆրանսիական հիւպատոսին այն ժամանակ, երբ նա իր կաւասի հետ փողոցով անցնում էր, մի թուրք փողոցային երեխայ հայհոյեց և ցեխի մի կտոր խփեց նրան։ Կաւասը ուզում էր բռնել երեխային, բայց նրա աղաղակների վրայ հաւաքուած մահմեդականները արգելք եղան այդ բանին։ Հիւպատոսին խփեցին բռունցքով։ Վալին գնաց ներողութիւն խնդրելու։ Բռնուած էին մօտ 15 հոգի, բայց յանցաւորներին չը գտան։ Ֆրանսիական դեսպան Կամբոնն այդ մասին բողոքից Բ. Դրան։

—Աթէնքից գրում են «Indépendance Belge» թերթին, որ Կրէտէ կղզու դրութիւն բաւական ծանր է։ Վերջին ժամանակներս կատարուած են մի քանի սպանութիւններ, և նահանգապետն այդ պատճառով հրաժարական տուեց։ Բ. Դուռը չընդունեց հրաժարականը և ուղարկեց նրան զրամ, զօրքի կարիքների և պաշտօնեաների ու զինուորների ռոճիկը բաժանելու համար։ Կրետէ կղզու բնակիչները պետութիւնների ներկայացուցիչներին մի երկար ծանուցագիր ուղարկեցին, որի մէջ խնդրում են վերստին մտցնել Հալէփի պայմանագրութիւնը։ Հայաստանից եկած տեղեկութիւնները խիստ յուզումներ են պատճառում կղզում»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Լոնդոն. 30 Հոկտ. Լորդ Սալսբիւրին երեկոյ Վատֆուրդում խօսելիս, ասաց որ նա կը ջանայ, շարունակելու համար լինի, կատարել իր նախորդի բռնած արտաքին քաղաքականութիւնը։ Յայտարարեց նոյնպէս որ ընկերական բարեկաւութիւնը կը լինի ներքին ամենագլխաւոր խնդիրը (Home queston) եկող սեզոնի համար։ Աղատ վաճառականութեան պատճառով եղած արժէքների անկումը—վերջացրեց նա—շատ նահանգներում սպանել է երկրագործութիւնը։

Փարիզ, 31 Հոկտ. Հանօթօնը—արտ. գործոց նախարարը պնդում է որ Ֆըրանսիան պիտի պահէ իր դաշինքը Մադագասկարի հետ. շատ արմատական պատգամաւորներ ցանկանում են կղզու միացումը Ֆրանսիայի հետ։ Զայների այդ տարբերութիւնը ուշացնում է նոր կաբինետի կազմուելը։—«Temps» լրագիրը իր այսօրեայ մի յօդուածով վստահութիւն է յայտնում որ «Times» հրատարակած Պորտ-Արթուրի դաշնագրի լուրը (ռուսաց հետ) ներկայացնում է եթէ ոչ այժմեան՝ գոնէ ապագայի իրերի դրութիւնը, որովհետև անկարելի է ենթադրել որ Ռուսիան ուշադրութիւնից վրիպեցնի այդպիսի եզակի առիթ օգտուելու համար Չինաստանի դրութիւնից։

Փարիզ. 31 Հոկտ. Պ. Բուրժուան, որ արմատականների կուսակցութիւնից է, յաջողել է մի նոր կաբինետ կազմելու։ Պ. Դումեր—ֆինանսների մինիստր. պ. Բուրժուան—ներքին գործոց մինիստր. Արտաքին գործոց մինիստրութիւնը դեռ դատարկ է. պ. Հանօթօն, որին առաջարկուեց այդ պաշտօնը՝ մերժեց ընդունել, որովհետև նա ընդդէմ է Մադագասկարի Ֆրանսիային միացնելուն, որը նոր կաբինետի քաղաքականութեան մի կէտն է։

Լոնդոն. 1 Նոյ. Ռէյտէրի սեփհական թղթակիցը Աքքերայից հեռագրում է որ Աշանթի երկրի (Կումասսի) թագաւորը մերժել է անգլիական ուլտիմատումը և ասել է որ նա դերադասում է պատերազմ, որի համար նա կատարելապէս պատրաստ է։—Հիւս. Չինաստանից եկած լուրերը յայտնում են որ մահմետական ապստամբները բռնել են Լան-Զան-Ֆոն Քան սուի մայրաքաղաքը. նրանք յաղթում են չինացոց բոլոր կէտերում։ Կենտր. Չինաստանի գաղտնի ընկերութիւնները միացել են մահմետականների հետ։

Պետերբուրգ։ 31 Հոկտ. «Նոր. վրեմ» ասում է որ ճապօնացիք սկսել են Լիաոթունգ թերակղզին թողնել։

Փարիզ. 1 Նոյ. պ. Բէրթըլօն արտ. գործոց նախարար եղաւ նոր կաբինետում։

Փարիզ. 2 Նոյ. Ֆրանսական թերթերը զարմանք են յայտնում որ պ. Բուրժուան արտ. գործոց մինիստրութիւնը յանձնել է պ. Բէրթըլօին և պատերազմական ու ծովային մինիստրութիւնները պ. Գավէնեաք և Լօքրօյ քաղաքացիներին։

Լոնդոն. 3 Նոյ. Ճապօնիան յայտնել է կառավարութիւններին, որ ինքը իր զօրքը կը հանէ Կորէայից այն ժամանակ, երբ Լիաօ-Թունգ թերակղզուց հեռանան։

Լոնդոն. 5 Նոյ. Կաբինէտը, առաջին անգամը լինելով ժողով գումարեց այսօր։ «Times»-ը այսօրեայ մի յօդուածի մէջ, կաբինետի ժողովի առթիւ, յայտնում, որ նայելով լեռի լուրջ կերպարանքին Արևելեան Եւրոպայում և Ասիայում, կաբինէտը կը բռնէ մի հաստատուն և խոհեմ ընթացք։

Փարիզ. 4 Նոյ. Պ. Բուրժուան, նախարարապետը, յայտնեց իր պրօգրամը ժողովի մէջ այս երեկոյ. պրօգրամն է, մի կատարեալ արմատական ռէֆօրմ հարկերի, տուրքերի մէջ և մաքսայի ընթացիկ դրութիւն։ Նախարարութիւնը կը պահպանի Ֆրանսիայի դաշնակիցների հետ բարեկամութիւն։ Այդ պրօգրամը սառնութեամբ ընդունեց, բացի արմատականների և սօցիալիստների կողմից։

Նիւ Եօրք. 6 Նոյ. Կառավարչական ընտրութիւնները վերջացել են. Հասարակապետականները տարել են մի քանի նշանաւոր յաղթութիւններ։

Պետերբուրգ. 5 Նոյ. Այստեղ հասած լուրերը հաստատում են որ Հիւս. Չինաստանի ապստամբութիւնը տարածուել է ամբողջ Կան-Սու-ի նահանգի մէջ. բոլոր կաշկարացի զինուորները ուղարկուել են ապստամբութիւնը ճնշելու համար։

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՐԺԷՔ ԳԼԽԱՒՈՐ ԲԵՐՔԵՐԻ

(23 հոկտեմբեր 95)

—

Որովհետև անցած շաբաթ, ապրանքների արժէքների մէջ տարբերութիւն չէր կղել, ուստի և չը հաղորդեցինք։

Այժմ արժէքները այսպէս են.

Նուշի միջակ լիդրը (14 և կէս փունտ) արժէ	12,75 —	ղռան
Փիստա (պիստակ)	11 — —	»
Սարղա, խալվարը (18 փութ)	100— 115	»
Սոկարի չամիչ, խալվարը	40— 45	»
Ցորեն, խալվարը	60— —	»
Գարի »	45 — —	»
Շաքար լիդրը	8,60— 9	»
Ճահանի չամիչ	125—130	»
Ընկոյզ	105—110	»

Սև փողին թումանին 1 ղռան, 10 կ. սարֆ տալի, իսկ նոր ղռանը հնի հետ փոխելու սարֆը թումանին 5 կ.։

Հին բամբակը բոլորովին վերջացել է, իսկ նոր բերքը դեռ չէ պատրաստուած. արժէքը անյայտ է. նոր բերքը միջակ է։

Առ հասարակ առևտուրը թոյլ է։

„ՇԱՒԻՂԻ" ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Լոնդոն. Յով. Տ. Մով. Գրեցէք աւելի լաւ է օրւայ հարցի մասին. ձեզ «Շաւիղ», որպէս աշխատաւոր թղթակցի, կուղարկւի ձրի։

Բուշիր. Կ. Զէյթունեան. Ստացանք շնորհակալութիւն. կը խօսենք դրա մասին, ձեր նամակը կը տպենք։

Խրիմ. Կարասու-Բազար. Լուս. Ս. Նալբանդեան. Ձեր արդէն վաղուց, սկսած № 1-ից, պ. Յ. Սպէնդիարեանի յանձնարարութեամբ, համարներ ուղարկել ենք Զանքօյի կայարանը։ Բաժանորդութիւն չոլս ամսուայ համար չէ ընդունվում, նոր տարուց կարող էք Ֆօրից գրել։ Իսկ այս տարուայ բաժնեգինը կը ստանանք պ. Սպենդիարեանից. նրան ուղարկեցէք։

Ռուշչուք. Ֆ. Հայլեան. լուր չունենք ձեզնից։

Դավրէժ. Բ. Հարց էք տալիս թէ՝ այսպիսի ճգնաժամում, երբ Կ. Պոլսի համակրելի Պատրիարքը խօսում է, բողոքում, գործում մի խօսքով, երբ քահանան անգամ աղաղակում են, ինչու է լռել ամենայն հայոց կուսող կաթուղիկոսը? Զարմանում ենք ճշմարիտ, որ գործողին ուզում էք Փլագեօրի հետ համեմատութեան մէջ դնել։

Արտօնատէր հրատարակիչ՝

ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿԶԱԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՒՐԻԶՈՒՄ „ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ" ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Զեռնատու արժէքներով գնում է ամէն տեսակ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄ (գործածած) նմոյշները ուղարկել վերջնական արժէքներով։ Պէտք ուածները յետ կը դարձեն. հասցէ՝ Société de cabinet de lecture populaire. Tauris.

3—4

GRAND HOTEL

ԳՐԱՆԴ ՕՏԷԼ

Հիւրանոց

ԱԼԱ-ԷԴ-ԴՕՎԼԷՅԻ ՓՈՂՈՑՈՒՄ

ԹԷՀՐԱՆ

7—50

Պատիւ ունիմ յայտնելու այն բարեկամներին, որոնք դիմել են ինձ տեղեկանալու համար թէ ճանաչում եմ և կարող եմ երաշխաւորել Հայու-հեաց ընկ. վարժարանի վարժուհու ով և կամ ինչ լինելը,—որ ես ժամանակ չունեցայ անձամբ գնալ տեսնելու. տեսայ պ. Վահան Մեսրովբեանին որը և պատասխանեց այսպէս. «Բաղդասարի հայերէն մայր և աղջիկ. աղջիկը սովորել է այստեղի բողոքականաց դպրոցում. այժմ մայրը ձեռագործ է սովորեցնում, իսկ աղջիկը՝ վարժուհութիւն է անում»։ Երկար խօսելուց յետոյ, յայտնեց որ ուզողը թող գայ տեսնէ։ Ուստի ես էլ իմ կողմից յայտարարում եմ որ վարժուհուն ճանաչել ուզողը անձամբ կարող է գնալ այնտեղ տեսնել և տեղեկանալ և այդպիսով ալ ես ինձ նեղութիւն չը պատճառել այդպիսի հարցերով։

Ռափայէլ Թադէոսեան

1—2